

Դոմինիկ ֆորտիե

# ԾՈՎԻՑ ՎՏԱՆԳՎԱԾԸ

ՎԵՊ

Թարգմանիչ՝

Կարինե Աղաբեկյան



Պ ԱԻ Ն Ս Յ

Երևան 2017

We acknowledge the support of the Canada Council for the Arts for this translation

Dominique Fortier, *Au péril de la mer*

Ֆորտիե, Դոմինիկ

**ԾՈՎԻՑ ՎՏԱՆԳՎԱԾԸ.** վեպ, եր.: Գիտանք, 2017, 94 էջ.

Իր գրադարանի լավ ժամանակներին Սան Միշել վանքը հայտնի էր որպես խոշոր Մատենադարան: XV դարում հենց այդտեղ՝ վանքի գորշ պատերի միջև, ապաստարան է գտնում մի նկարիչ, որին հետապնդում են հուշերը իր սիրած կնոջ մասին: Հինգ հարյուր տարի անց հենց այդտեղ՝ երկնքի և ծովի միջև, նրան գտնում է մի վիպասանուհի: Նրանք հանդիպում են անձրևի տակ մոռացված նոթատետրի էջերին: Այս վեպը ծոն է գրքին և նրանց, ովքեր այն ստեղծում են ու պահպանում:

Դոմինիկ Ֆորտիեն կանադուհի արձակագիր է: 2016 թվին ԾՈՎԻՑ ՎՏԱՆԳՎԱԾԸ վեպն արժանացել է Կանադայի բարձրագույն գրական մրցանակին (Le Prix littéraire du Gouverneur général):

ISBN 978-9939-810-37-9

© Dominique Fortier and Éditions Alto, 2015

This edition is published by arrangement with Alto Editions in conjunction with its duly appointed agent L'Autre agence, Paris, France. All rights reserved.

© Գիտանք, թարգմանության և ձևավորման համար, 2017

Մեր թվարկության 14\*\* թվականին Սան Միշելը ծովածոցի մեջտեղում էր. դրա կենտրոնում վեր էր խոյանում վանքը: Վանքի մեջտեղում դրա խորանի շուրջը տեղադրված էր վանքի եկեղեցին: Եկեղեցու թևի մեջտեղում պառկած էր մի տղամարդ: Այդ տղամարդու սրտի վիշտը այնքան խոր էր, որ չէր տեղավորվի ծովածոցում:

Նա հավատք չուներ, բայց եկեղեցին չէր զայրանում նրա դեմ: Երբեմն տառապանքը այնքան խորն է լինում, որ մարդը հավատքի կարիք չունի: Սալերին փռված, ձեռքերը տարածած՝ էլուան ինքը մի խաչ էր:

Որոշակի ժամերին վանքը լուռ է, սրահներն ամայի են: Նախատոնակի և առավոտյան ժամերգությունների միջև իջնում է մի երկնագույն լույս, ժամանակը կանգ է առնում՝ նորից շունչ առնելու: Այդ ժամը պատկանում է հիվանդներին, խենթերին ու սիրահարներին, այլ ոչ թե հանգիստ խոնկացող հասարակ մարդկանց: Այդ ժամին ես արթնանում էի քնած Աննայի կողքին ու ականջ դնում նրա թեթև շնչառությանը: Նա քնում էր ամենաանհավանական դիրքով՝ ձեռքերը ծալած, ոտքերը խաչած, ասես քունը զվարճացել էր՝ դրդելով, որ նա նաև կեցվածք ընդունի երազում: Լուսամուտի միջով տեսնում էի երկինքը, որ դեռ մուգ կապույտ էր: Մի քանի րոպեից այն կլուսավորվի, և օրը կսկսվի բոլորի համար, բայց այս պահը սոսկ ինձ էր պատկանում:

Ես դեռ արթնանում եմ այս անորոշ ժամին՝ գիշերվա ու այգաբացի միջև, և ավելի քան մեկ տարի անց տակավին փնտրում եմ կողքիս նրա քնած մարմինը: Ամեն անգամ ինձ մի քանի վայրկյան է հարկավոր՝ մտաբերելու այն պարզ փաստը, որ նա այլևս չկա: Ամեն առավոտ, արևածագից առաջ ես վերստին կորցնում եմ նրան: Թվում է, թե նույն ցավը, որ զգում ես ամեն օր, հետզհետե բթանում է դանակի շեղքի նման, որը ի վերջո բթանում է միս կտրելով: Ես ամեն օր կորցնում եմ նրան առաջին անգամվա պես: Նա երբեք չի դադարում մահանալ:

Ես Աստծո մարդ չեմ, ոչ էլ գիտության մարդ: Նկարիչ էի և այլևս նկարիչ չեմ: Աշխարհին մի փոքր ծանոթ լինելու համար պարտական եմ ինձնից ավելի գիտունների պատունների: Ես սա գիտեմ. սիրում էի մի կնոջ, և նա մահացած է:

Այդ կինը ինձ չէր: Ամուսնացած էր ուրիշի հետ, բայց ոչ ոքի չէր պատկանում: Սաթի պես սև մազեր ուներ և աչքեր, որոնց զույնը երբևէ չէի տեսել ո՛չ նախկինում, ո՛չ էլ հետո: Այսօր նա գետնի տակ է, որդերը կրծում են նրա աճյունը: Ռոբերը դժկամությամբ է պատասխանում իմ հարցերին, թե ուր են տե-

ղափոխվում մահացածները: Կուզենայի նրա պես հավատալ, որ իմ սիրած կինը Աստծո կողքին է, Նրա թագավորությունում՝ արդարակյացների շրջապատում: Չգիտեմ, թե ինչ կերպ համատեղել այդ երկու գաղափարը: Արդյո՞ք Աստծո թագավորությունը լցված է որդերով, և բոլորը զբոսնում են այնտեղ՝ խարխափելով, այլանդակված, դատարկ ակնախոռոչներով: Այս հարցերը իմ ըմբռնումից վեր են, և ես փորձում եմ բոլորովին չմտածել դրանց մասին, բայց դրանք ինձ հետապնդում են երազում: Իսկ հետո դողանջում են ժամերգության զանգերը, և վանականները վեր են կենում ու երկար շարքով գնում են մատուռ, որտեղ գովերգում են նոր օրվա գալուստը:

Նա մի շատ հարուստ վաճառականի դուստր էր, իսկ ես աննշան մարդու որդի էի:

Ես բավականին լավ նկարիչ եմ. փորձառություն եմ ձեռք բերել արվեստանոցում, որտեղ ինձ սկզբում վստահել էին նկարի հետմահիմքի նկարազարդումը բնապատկերով, որին ավելի փորձառուները պատկերում էին ունևորների և իշխանավորների դիմանկարը. հետո ինձ նույնպես թույլ տվեցին պատկերել նրանց: Մի քանի տարի անց այնքան պատվիրատուներ կուտակեցի, որ հեռացա արվեստանոցից և տանն էի ընդունում գնորդներին: Ես արագ հասկացա, որ շատ կարևոր է միջնախավի մարդու դիմանկարին հաղորդել վեհանձնություն, որը պակասում էր նրա դեմքին: Նրանք համարում էին, որ իմ նկարներին ավելի գեղեցիկ են, քան ցույց էին տալիս իրենց հայելիները, դժգոհում էին հայելիներից և վերադառնում էին ինձ մոտ, երբ հարկավոր էր նկարել իրենց կանանց կամ սիրուհիներին:

Շուտով ես որոշակի համբավ ձեռք բերեցի, և ամեն մի նշանավոր մարդ կարևոր համարեց ունենալ իր դիմանկարը, որը վրձնել էր Էլուա Լերուն: Դա ասում են առանց գլուխ գովելու. քաղաքում դիմանկարիչները շատ չէին, և ոչ ոք չէր աշխատում ինձ պես արագ, ուստի իմ գործը չէր պակասում: Որոշ ժամանակ անց նույնիսկ կարող էի ինձ թույլ տալ մերժել պատվերը: Գերադասում էի ընտրել այն գործը, որ լավ էր վարձատրվում և կարող էր ինձ զվարճացնել: Իսկ մի գեղեցիկ օր դադարեցի նկարել տխուր զգեստներով հավաստավարներին ու եպիսկոպոսներին: Հաճույքի համար գերադասում էի ուրվանկարել թռչուններին՝ թռչելիս, քջուջ անելիս, իրենց բույնը հյուսելիս կամ ձագերին կերակրելիս: Ինձ դուր էին գալիս դրանց գունեղությունը և շարժունությունը: Հատկապես դուր էր գալիս, որ դրանց չէր անհանգստացնում իմ ներկայությունը: Հանգստանալիս՝ նաև ձվեր էի նկարում:

Այդ շաբաթ ես համաձայնեցի նկարել մի ամուսնացնելու աղջկա դիմանկարը, որպեսզի ծառայություն մատուցեմ մի բարեկամի, որը պետք է հատուցեր

ընտանիքին լավության համար: Սակայն նախապես հարցրի, թե արդյոք նա գեղեցիկ է:

- Չգիտեմ, - պատասխանեց բարեկամը, - միայն գիտեմ, որ նա երիտասարդ է:

- Գոնե երիտասարդ է, - պատասխանեցի՝ պատկերացնելով մի գունատ պարմանուկու, որի դիմանկարը պատվիրում են՝ որոշելով կնության տալ հեռավոր ու կասկածամիտ ազնվականի, որը միայն տեսնելուց հետո է տալիս իր համաձայնությունը:

Նկարն սկսելու առավոտյան, շոշափելով բարդեճու նկարատախտակը, որպեսզի համոզվեմ, որ փշեր կամ սեպեր այլևս չկան, ես արդեն պատրաստ էի շտկելու դեմքի կարմիր երանգը, մեղմելու կզակի կորագիծը կամ կարճացնելու չափից ավելի երկար քիթը, երբ ներս մտավ աղջիկը՝ դայակի ուղեկցությամբ: Աչքի պոչով տեսա, որ նա նրբակազմ է ու սևահեր, բայց անմիջապես չըրջվեցի՝ նրան թողնելով, որ զննի սավանը, որի առաջ նա պետք է նստեր, և որտեղ համառոտակի պատկերված էր ոլորում ճանապարհի դաշտավայրում: Տարիների ընթացքում նկատել էի, որ մարդիկ, որոնց պետք է պատկերեի, զրեթե միշտ շփոթություն են գզում: Այդ վիճակում նրանք բացահայտում են ինչ-որ բան, որը հետո փորձում են ինձնից թաքցնել՝ կեցվածք ընդունելու երկար ժամերի ընթացքում, և որը նրանց կամքին հակառակ երևում է իրենց դիմանկարին: Շփոթված վիճակը, որի ժամանակ նրանք ականաբացահայտում էին իրենց, կարծես դառնում էր նկարի անտեսանելի, բայց ներկա հիմքը, որը երանգավորում էր մնացածը: Բայց երբ ես ի վերջո շրջվեցի, նա հենված էր ծալովի աթոռակին, որ դրել էի նրա համար, և հանգիստ նայում էր ինձ իր աչքերով, որոնց գույնը այսօր էլ չեմ կարող նկարագրել: Ցնցված՝ ձեռքիցս վայր զցեցի վրձինը և, փորձելով դա բռնել, շուռ տվեցի ջրով թափ:

...Որոշ վանականներ, հատկապես ավելի երիտասարդները, եղեգնի պես բարակ են, բայց նաև կան տակառի պես կլոր վանականներ, և սա անբացատրելի առեղծված է՝ հաշվի առնելով նրանց բավական համեստ սննդակարգը:

Կեսօրին մեզ տալիս են գինու գավաթում թրջված մի կտոր հաց, մեկ խնձոր, մի կտոր պանիր կամ մի բուռ լոբի: Ընթրիքին մատուցում են խաշած բակլայով ու բանջարեղենով կերակուր, գինի, որին հաճախ ջուր է խառնած, և հացի մնացորդը: Սակայն ոմանք նույնքան ճարպոտ ու փափուկ մարմին ունեն, որքան շաքարած մրգից գիրացած կանայք: Գուցե դրա մեղավորը ոչ թե ուտելիքն է, որը նրանք կուլ են տալիս առանց հաճույքի, այլ սրբերի վար-

քագրությունը, որը միաժամանակ կլանում են ուտելիքի հետ՝ մի գդալ ոսպ, մեկ բարի գործ. մի կում գինի, մեկ սաղմոս: Նրանց փորն ուռած է խրատական բառերից, տառապանքներից, որոնք որպես ուտելիք մատուցվում են ճաշաժամերին:

Ամենավեհ գործերի պատմությունը խառնվում է ուտելու և կիսազուսպ բխկոցների աղմուկին: Պարտադրելով այս ընթերցումները՝ նրանք հավանաբար ուզում էին մարմնի հետ միաժամանակ սնել հոգիները, բայց ես չեմ կարող խուսափել այն մտքից, որ նաև ուզում էին վանականներին հիշեցնել, որ նրանք հասարակ մահկանացու են՝ ոչ թե այն սրբերից են, որոնց գովերգում են, այլ բակլա ուտող և քամի արծակող, խոնարի մարդ արարած: